ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Այն փաստը, որ Երկրի մագնիսական և աշխարհագրական բևեռները ճշգրտորեն չեն համընկնում, հայտնի էր դեռևս Կոլումբոսին: Ահա թե ինչ է գրում նա Իսպանիայի թագավորին և թագուհուն ուղղած իր նամակում. «...Երբ իմ նավը լողալով հեռացավ Իսպանիայի ափերից, և ես Ազորյան կղզիներից հարյուր լիգ անցա դեպի արևելք, երկար ժամանակ դեպի հյուսիս-արևելք ցույց տվող կողմնացույցի սլաքը հանկարծ մեկ քառորդի չափ շեղվեց դեպի հյուսիսարևմուտք և այլևս չփոխեց իր ուղղությունը...»:

Կողմնացույցի սլաքի այդպիսի տարօրինակ վարքը նավաստիներին խուճապահար է անում: Նրանք կարծում էին, թե կողմնացույցի սլաքը միշտ պետք է ուղղված լինի դեպի Բևեռային աստղը, այսինքն՝ միշտ պետք է ցույց տա ճիշտ հյուսիսային ուղղությունը: Այդպես էր կարծում նաև Կոլումբոսը: Սակայն նա կանխում է նավաստիների խռովությունը, որոնք պահանջում էին վերադառնալ, և շարունակում ճանապարհորդությունը: Հակառակ դեպքում Ամերիկայի հայտնագործումը կհետաձգվեր անորոշ ժամանակով: